ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ – 9

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 12-ը՝ Նորիկ Անդրեասյանը, Ազատ Զաքարյանը, Աշոտ Հունանյանը, Վահագն Մկրտչյանը, Կարեն Շահազիզյանը, Արմենակ Սարգսյանը, Բաբկեն Վարդանյանը, Հայկ Վարդանյանը, Մուշեղ Տաշչյանը, Սարիբեկ Օվոյանը, Սամվել Շուխյանը, Նավասարդ Պետրոսյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալներ Գ. Եղիազարյանն ու Վ. Սաֆարյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանն ու Շ. Վահանյանը /ժ/պ/, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Ս. Սահակյանը, լրագրողներ Լ. Գարանյանն ու Ա. Ազիզյանը, ինչպես նաև Ա. Ոսկանյանը:

Մինչև օրակարգի քննարկմանն անցնելը, հայտարարությամբ հանդես եկան Արմենակ Սարգսյանն ու Սարիբեկ Օվոյանը /կատարված աշխատանքները գնահատելու և որոշ աշխատանքներ առաջնահերթ կատարելու առաջարկություններով/:

Աշտարակում տուրիզմի զարգացման հայեցակարգի դրույթներն ի կատար ածելու և տուրիզմի հետ կապված բազմաբնույթ հարցերը կոորդինացնելու վերաբերյալ հաղորդումով հանդես եկավ և որպես այդ բնագավառի մասնագետ ներկայացավ Արթուր Ոսկանյանը: Համայնքապետի հետ ըստ նախնական պայմանավորվածության այդ աշխատանքները կատարվելու են նրա կողմից:

Ավագանու անդամների հետ հարց ու պատասխանից հետո, դրական եզրակացությամբ Ա. Ոսկանյանին ցանկացան բեղմնավոր աշխատանք:

Այնուհետև միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ

1. Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
   /Զեկուցող՝ Շ. Վահանյան/
2. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:
   /Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված 175-001 ծածկագրից 0.006հա բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
4. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողատարածքներ կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

5. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողերից որոշ հողատարածք կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով և ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

Լ Ս Ե Ց Ի Ն - 1 - *Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ Շանթ Վահանյանը:

Նա նշեց, որ փոփոխության անհրաժեշտությունն առաջացել է առաջնահերթության կարգով որոշ աշխատանքներ ֆինանսավորելու նպատակահարմարությունից ելնելով:

Զեկուցման վերաբերյալ ամբողջական նյութերն աղյուսակների տեսքով կցվում է արձանագրությանը:

Առավել մանրամասն փոփոխության թվերը ներկայացնելուց և համայնքի ղեկավարի պարզաբանումներից հետո հարցը դրվեց քվեարկության:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Օրակարգային երկրորդ հարցը ևս ներկայացրեց Շանթ Վահանյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ առաջարկվում է արտոնություն տալ 19 անձի, գույքահարկի մասով՝ 465.809.00 ՀՀ դրամի և հողի հարկի մասով՝ 114.700.00 ՀՀ դրամի չափով:

Ծանոթ լինելով որոշման նախագծին, ներկա գտնվողներն առաջարկեցին այն հաստատել:

Քվեարկության արդյունքում ընդունվեց միաձայն որոշում:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված 175-001 ծածկագրից 0.006հա բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ և հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը:

Նա նշեց, որ հարցը քննարկման է ներկայացվել հիմք ընդունելով ուսումնասիրության արդյունքներն ու ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված հրահանգը:

Զեկուցողին հարցեր տվեցին և պարզաբանումներ ստացան Ն. Անդրեասյանը, Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը և Կ. Շահազիզյանը:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -4 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողատարածքներ կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցող Ա. Մնացականյանը նշեց, որ 084-029 ծածկագրից 110քմ տարածք առաջարկվում է տրամադրել մրցույթով, կառուցապատման իրավունք տրամադրել 1քմ-ի համար տարեկան վճարի գին սահմանելով /մեկնարկային/ 200 ՀՀ դրամ և 0861-0302 ծածկագրից 4644քմ, 1քմ-ի համար տարեկան վճարի չափը՝ 70 ՀՀ դրամ:

Նշվեց նաև, որ առաջարկվում է համաձայնություն տալ 2 միավոր /յուրաքանչյուրը 6քմ/, տարեկան 20.000 ՀՀ դրամով կառուցապատման իրավունք տրամադրել <<Պրեմ Ստենդ>> ՍՊԸ-ին, Պռոշյան և Երևանյան փողոցներում թերթի կրպակներ տեղադրելու համար:

Միաժամանակ նշվեց, որ հնարավոր է նաև երրորդ կրպակի տեղադրումը Սիսակյան փողոցում:

Հարցի հետ կապված ելույթ ունեցան և իրենց նկատառումները հայտնեցին Ս. Օվոյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը, Մ. Տաշչյանը, Ա. Հունանյանը, Ա. Զաքարյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ տվեցին համայնքի ղեկավարն ու զեկուցողը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ձեռնպահ էր Կ. Շահազիզյանը:

Լ Ս Ե Ց Ի Ն -5 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Արմեն Մնացականյանը:

Զեկուցման վերաբերյալ նյութերը տես՝ հավելված 1-ում:

Ավագանու անդամներ Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը և Հ. Վարդանյանը պարզաբանումներ ստանալու նպատակով հարցեր ուղղեցին զեկուցողին:

Պարզաբանումներ տվեց նաև Թ. Շահվերդյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ձեռնպահ էր Ս. Օվոյանը:

Լ Ս Ե Ց Ի Ն -6 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողերից որոշ հողատարածք կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը:

Նա նշեց, որ Քասախի փողոցի 1/1 հասցեում գտնվող ավտոգազալցաճնշակայանի անվտանգ շահագործումն ապահովելու համար նպատակահարմար է գտնվել նրանց, առանց մրցույթի հատկացնել 40քմ տարածք՝ Երևանյան փողոցից մուտքի կազմակերպման խնդիրը լուծելու համար:

Հարցի հետ կապված ելույթ ունեցան և ցանկացան լրացուցիչ պարզաբանումներ լսել Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, Մ. Տաշչյանը, Ն. Անդրեասյանը:

Հարցին դրական լուծում տալուն կողմ արտահայտվեցին և խնդրին տեղյակ լինելու հետ կապված լրացուցիչ տեղեկություններ տվեցին Ա. Սարգսյանը, Վ. Մկրտչյանը և Ն. Անդրեասյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեց, խնդրի կարգավորման անհրաժեշտության մասին խոսեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Շահագրգիռ քննարկումից հետո անցկացվեց քվեարկություն:

Քվեարկությանը չի մասնակցել Կ. Շահազիզյանը, ձեռնպահ էին Մ. Տաշչյանն ու Բ. Վարդանյանը, դեմ էր Ս. Օվոյանը:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 7</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով և ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգային վերջին հարցը ևս ներկայացրեց Արմեն Մնացականյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ աճուրդ-վաճառքի ներկայացվող հողակտորները հիմնականում գտնվում են Աբովյան 31 շենքի հարևանությամբ /6 կտոր/, ինչպես նաև Տիգրան Մեծի N29ա, Պռոշյան N16 և Խորենացու փողոցի N 5 շենքերի հարևանությամբ /մեկական/:

Աճուրդ-վաճառքի մեկնարկային գին է առաջարկվում հողի կադաստրային արժեքի 65%-ը:

Պարզաբանումներ ստանալու համար հարցեր բարձրացրեցին՝ Կ. Շահազիզյանը, Մ. Տաշչյանը, Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, Ն. Անդրեասյանը:

Հարցերին պատասխանեցին Թ. Շահվերդյանն ու Ա. Մնացականյանը:

Քվեարկության արդյունքում որոշումն ընդունվեց միաձայն:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2017 թվականի հունիսի 27-ին:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

<u>ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝</u>
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

$\frac{\text{ST}}{\text{U.Z.}}$